23.06.2025թ

Վարդենիսի համայնքի ղեկավար
պարոն Ահարոն Խաչատրյանին

Հարգելի պարոն Խաչատրյան,

Վարդենիս համայնքը հարուստ է իր հերոսներով՝ նրանցով, ովքեր կյանքը նվիրեցին հայրենի հողի խաղաղությանը:

Այդ տղաների հիշատակը վառ պահելու և սերունդներին փոխանցելու նպատակով գրող և մանկավարժ Ալինա Մխեյանս նախաձեռնել եմ մի հուշագիրքի հրատարակություն՝ վերնագրված «Տղերքն ընկան, որ Վարդենիսն ապրի»: Գիրքը կներառի մեր համայնքի հերոսների կյանքին, գործին ու հիշատակին նվիրված նյութեր՝ պատմություններ, հուշեր և լուսանկարներ: Ցավոք, նախաձեռնության առջև կանգնած է ֆինանսական խոչընդոտ, որի հաղթահարման համար դիմում ենք նաև Ձեզ:

Մենք վստահ ենք, որ Դուք՝ որպես համայնքի ղեկավար, որն իրեն բազմիցս ապացուցել է որպես լավ մարդ, ով չի մերժում ոչ մի հայրենանվեր նախաձեռնություն և միշտ աջակցում է Վարդենիսին վերաբերող կարևոր գործերին, կցանկանաք Ձեր մասնակցությունն ունենալ նաև այս արժեքավոր գործի իրականացման գործում: Ակնկալում ենք Ձեր աջակցությունը, որպեսզի գիրքը կարողանա լույս տեսնի և դառնա վկայություն համայնքի երախտագիտության՝ մեր ընկած տղաների հանդեպ:

Հարգանքներով՝
Բանաստեղծուհի ,արձակագիր,մանկագիր
Արծիվ 4 ռազմամարզական
Լանջիկ գյուղի խմբակի ղեկավար

Ա. Մխեյան ----------